ԳՐԱԿԱՆ

ԵՍ ԿԱՐՕՏՑԱՑ

Հանոյքով տեղ կու տանք Գր. Միհրանեանի հետեւեալ կարճ գրութեան: Կարապետ Միհրանեան, բնիկ Սաղիմացի, մին է պատուական այն հայորդիներէն՝ որոնք 1946ի դէպքերուն, հարկադրաբար, ֆիզիքապէս միայն հեռացած են Ս. Քաղաքէն, երբեք սակայն չխզելով իրենց սրտի ու մտքի կապերը Հայ Երուսաղէմէն: Ուրախ ենք, որ հակառակ իր յառաջացեալ տարիքին ու հիւանդագին վիճակին, Գր. Միհրանեան իր բարի սրտէն մտքին փոխանցուած կայծերը իր կարգին կը փոխանցէ «Սիոնին»:

ԽՄԲ.

Կարօտցայ ես քեզ, ծննդավայրն իմ սիրուն, որբութեամբ և խորհուրդներով լեցուն: Կարօտցայ ես քեզ. ուր մեր Տէրը մարդացաւ, ապրեցաւ և անմահութիւն քարոզեց մեզի. ուր չրջեցաւ չուներու վրայ, ծովերու վրայ քալեց և փոթորիկները սասանեց, և ուր իր ձայնն ու շաչը կը մնան կարծես մինչև այսօր:

Լոնտոն, 7 Փետրուար-1983

Կարօտցայ ես տաճարներուդ, գիւղերուդ, քաղաքներուդ, լեռներուդ, կապոյտ երկնքիդ: Կարօտցայ ես Հայ Երուսաղէմին, Սիոնի նուիրական բարձունքին թառած:

Կարօտցայ երկրիս ժողովուրդին, որ տարբեր է կարծես ուրիշ ժողովուրդներէ: Հոն ալ մարդերը կ'ապրին նոյն ցանկութիւններով, տկարութիւններով, փոքրութիւններով և մեղքերով, բայց կարծես թէ անմեղօրէն կը մեղանչեն, չար կը գործենանգիտակցաբար: Տէր, դուն Ս Խաչիդ վրայէն Հոր Աստուծոյ աղաղակեցիր, որ ներէ անոնց, որովհետև չեն գիտեր թէ ի՞նչ կը գործեն, և այսպէս ալ մնացին մինչև այսօր:

Տէր, բարի է երկիրս. զոր Դուն ընտրեցիր. մեր հայրենիքին հաւատաս սիրելի է մեզի ան: Երկար դարեր մենք հայրենիք չունեցանք, ու մեր եկեղեցիները եղան մեր հայրենիքը: Հոն ապաստանեցանք, մխիթարուեցանք, քաջալերուեցանք և մեր ինքնութիւնը պահեցինք: Տէր, պահէ Հայ Երուսաղէմը իր եկեղեցիներով. թող անոնց կոնթեղին ձէթը չմարի և պարծանքը մնան առաւելապէս մեր ազգին:

Աշխարհ կ'ապրի վտանգաւոր ժամանակներու մէջ, բայց դուն, Տէր, պահէ զայն ամէն չարէ, Երուսաղէմիդ սիրոյն համար:

Կ. ՄԻՀՐԱՆԵԱՆ

կամ տեսանելի առարկան է, որ չնորհաց նշան և միջնորդ լինելու համար, Քրիստոսէ հաստատուած գործողութեան մը առիթով կը գործածուի անձի մը վրայ, Խորհուրդներու նիւթ և ձև բառերը հնաւանդ բացատրութիւններ չեն և լատիններուն մէջ անգամ, որոնց մէջ աւելի յուզուկցան և ճշմարտուեցան Խորհուրդներու վարդապետութիւնները, անոնք ԺԳ. Դարէն առաջ գործածուած չեն գտնուիր, և անոնց առաջին հեղինակը կը համարուի Գուլիէլմոս Անախքոդորացի (+ 1230), թէև ոչ վստահաբար: Բայց չ'արժեր երկարել բառերուն վրայ, դի բառերը գաղափարաց նշաններ են միայն, ու գաղափարը՝ թէ խնդրոյն էութիւնը իր մէջ բան մը կը պարունակէ՝ շատ աւելի հին է, ու բոլոր եկեղեցիները և մասնաւորապէս երբ Խորհուրդներու մասին կը խօսին՝ կը ջանան ճշդել թէ ո՞ր բանն է որ պիտի կիրարկուի: Ուրեմն, Խորհուրդներուն նիւթերը ճանչցած են աւանդութենէն և իւրաքանչիւրին հաստատութեան պարագաներէն:

ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 32)

digitised by A.R.A.R.@